

ՊԱՏՄԱՎԱՆ

ՄԱՍՆԱԿՈՐ ՊԱՏՄԱԳՐՈՒԹԻՒՆ

Ս. ՆՇԱՆԻ ՎԱՆՈՒՅ ՍԵԲԱՍՏԻՈՅ



ԳԼՈՒԽ թ.

Յողախ Տեսչութեան Տեսառն Ներսիսի Արքեպիսկոպոսի եւ Կարողիկոսութեան եւ մահուան նորին եւ յաջորդութեանց Անդրեաս Բ.ի, Մելիքսեղէկ Բ.ի, Սահակայ եւ Մելիքսեղէկ Գ. Արենիեպաց եւ ի սակա նահաւակութեանց ումսնց ՚ի Սեբաստիա:

Յետ շինութեան և նորոգութեան եկեղեցւոյ Սրբոյն Սարգսի յաջորդ ամբին փոխեցւաւ առ Քրիստոս Անդրեաս Ա. Արքեպոս. Սեբաստիոյ և թաղեցւաւ ՚ի վանս Սրբոյն Նշանի (Ծ. 222 = 1637. Յիշտկրն.) և յաջորդեաց նմա Տ. Ներսէս Վրդպատ. և արքի Սպո. Սեբաստացի, այր յառաջադէմ և յաջողակ ՚ի մեծագործութիւնու Սարգէս և ցուցաք ՚ի վեր անդր, յառաջագնաց եղեւ շինութեան եկեղեցւոյ Ա. Սարգսի, վասն որոյ և համբաւ նորա հռչակեալ և տարածեալ եղեւ ընդ ամենայն տեղիս, ՚ի մէջ Ազգիս, որ և կալաւ զեթոռ Տեսչութեան վիճակիս Սեբաստիոյ բարեիննամք հագածութեամբ և քաջագոյն կառավարութեամբ զամս իրբ 11. Եւ յետ մետասան ամացն (Ծ. 71 = 1648) հետո վաղճան կենաց Տեսառն Սիմէկոնի Կաթուղիկոսին Սսոյ՝ որ և էր Սեբաստացի, և ապա միաբան հաւանութեամբ Արքեպոսաց վիճակին, քանիսնայից և իշխանաց, ընտրեցւաւ և կոչեցւաւ ՚ի Կաթողիկոսութիւն ամենայն Հայոց Սսոյ Տ. Ներսէս Արքեպոս. Սեբաստիոյ և զնացեալ օծու և նստաւ յԱթոռն Հայրապետական ՚ի Սիս կրիկիոյ: Եւ ապա նստաւ յԱթոռ Առաջնորդութեան Սեբաստիոյ ՚ի վանս Ս. Նշա-

նի, Անդրէաս Արքեպոս՝ Արարակիրցի, որ Միաբան Սարգիս Վրդպատ.ի ՚ի Կարին, այր գիտանկան և անուանի: Յաւուրո յայսոսիկ (Ծ. 3 = 1651, Մայիս 28) Փիլիպպոս Կաթուղիկոս Սրբոյ էջմիածնի եկին ՚ի Մայրաքաղաքս ՚ի Սկրաստիա յաւուր Դշ. զոր ընկալան մեծամեծք քաղաքիս պատշտոն պատուվ ՚ի վանս Սրբոյ Նշանի, զծայրագոյն յոդութեան ուղուոյն՝ ՚ի վանս Սրբոյ Նշանի զաւուրո եօթն և տասն և ապա անցեալ գնաց յուխտ ՚ի Սուրբ Երուսաղէմ: Գնացեալ էր և անդ ՚ի ոոյն ժամանակի Տ. Ներսէս Կաթուղիկոս Սսոյ, յորում ահեալ զիմիմեանս աւրախ եղեւ յօյժ և խօրհնեցան և խօսեցան բազում ինչ ՚ի մէջ իւրեանց, վասն բարձման անկարգութեանցն՝ որք մտեալ էին յեփիսկապոսունն և յերիցունն, և վասն անհետ առնլոյ զատելութիւն Բշնամութեան որ կայր ՚ի մէջ երկուց Աթոռոց: Կոչեցին վասն այր զեպիսկապոսունն և զվարդապետ շրջակայ գաւառաց և արարին ժողով մեծ յերուսաղէմ յորում էր և Պատրիարքն Երուսաղէմայ Ածաւար Արքեպոս. և ՚ի ժողովի անդ սահմանեցին երեքտասան կանոնական Գլուխ Բանից և հրատարակեալ և գրեալ զայնս ՚ի կոնդակի առաքեցին ՚ի վիճակ ամենայն Արքեպոսաց և ՚ի ճակատ անդր կոնդակի դրոշմեալ կան երեք կնիք մեծամեծք կարմիր և ՚ի սոսորի եպիսկոպոսուց և վարդապետաց, որք էին ՚ի ժողովի անդ վարդապետաց, սրբ էին ՚ի ժողովի անդ կարմիր կառավագիր Ս. Նշանի Սեբաստա-

եկալ յերուսաղէմէ և ճանապարհ արարակար գնաց 'ի Կ. Պոլիս, իսկ Տ. Ներսէս կտթուղիկոս Սեբաստացի դարձաւ 'ի տեղի իւր 'ի Սիս Կիլիկիոյ (ԾմձԱ = 1652), և նեղան ի բռնութենէ անօրինաց և եկեալ անտի եկն 'ի Սեբաստիա և կեցեալ աստի ժամանակա ինչ փոխեցաւ առ Քրիստոս 'ի յայն բնաւեցի և եղաւ մարժին նորա 'ի տապանի յիշրակերտ եկեղեցւոջ Սրբոյն Սորգսի յետիկոյ Աջ Դասին 'ի հիւսիսոյ կողմանէ և պատուել շիրիմ նորին մշտավագու կանթեղօք և 'ի դամբարանէ նորա լինի բժշկութեն ամենայն ցաւոց՝ հաւառ տով դիմուղցն և կոչի 'ի բնտկչացն Գիերեղման հոգեկու Տիրոջ։ Սա եկաց յԱթու կաթուղիկոսութեան ամս իրեն 6 կամ 5 և ամբաք ինչ Յաջորդ ամին (ԾմձԳ = 1654) հասանի և գալան կենաց Անդրէս Բ. Արքեպո.ին Սեբաստիոյ և 'ի նոյն ամի յայորդէ նմին Մելքիսեդէկ Բ. Արքեպո. Կ. Պոլսիցի՝ որդի Տ. Մինաս Քահանայի՝ այր վեհանձն և խօհական։ Զամանէ գրէ պատմիչն թէ արար յուղվ շինութիւնն 'ի Ս. Մենաստանիս և յաւել զրագուր յիշատակս, և ընդ իւր երեր 'ի Կ. Պոլսոյ գեղեցիկ արուեստակերտ գաւագանու, սկիհո, խաչս և զայլ սպասու սըրբրութեանց, ընդ որս և զմագաղաթեայ աւետարան մի՛ զորս Ղարա-Ետզինուն աւարի առեալ յեկեղեցւոյ Ս. Աստուածածնին և տարեալ 'ի Կ. Պոլսի վաճառեալ էր քսան սուկոյ՝ ուրիմն Շահզատէ կնոշ և նա առեալ ետ յիշատակ 'ի ձեռն Տ. Մինաս Քահանայի Կ. Պոլսեցւոյ, որոյ որդին՝ Տէր Մելքիսեդէկ Արքեպո. Առաջնորդ եղեալ Սեբաստիոյ երեր ընդ ինքեան աստ և հո կրկին յիշատակ 'ի գուռն Ս. Աշածնի եկեղեցւոյն։ Սա ազատեաց նաև 'ի ձեռաց ումանց զեկեղեցւոյն անօթս Սրբոյ Մենաստանիս զոր եղեալ էին 'ի գրաւ վասն 1500 դանեկան պարտուց, որ և վճարեաց զամենայն և կտրգաւորեալ ճառատեաց զկարգս եկեղեցւոյ, որ խանգարեալ էր 'ի ծուլութենէ թուլամորթից և եղեւ առիթ և պատեառ ուսման Մանկանց եկեղեցւոյ, վասն որոյ և կոչեցաւ երկրորդ լուսաւորիչ ժողովրդեան Քաղաքիս Սեբաստիոյ, 'ի սմին ժամանակի (ԾմձԷ = 1668) ենաս վաղճան կենաց Թորոս

կաթուղիկոսին Սոյոյ, և եղաւ 'ի տեղի նորին Սեբաստացի Խաչտառւը Արքեպո. 'ի կաթուղիկոս ամենայն Հոյոյց 'ի Սիս Կիլիկիոյ։ Սա վեշտասան ամօք յառաջ Կատաւ և Պատրիարք 'ի Կ. Պոլսի՝ ամ մի և ամիսս վեց կեցեալ յԱթոռ Առաջնորդութեան Մելքիսեդէկ Բ. Արքեպո. ի Պոլսուոյ ամս ինչն՝ վաղճանեցաւ և նստաւ յԱթոռ Տեսչութեան Սեբաստիոյ 'ի վանս Ս. Նշանի խսահակ Արքեպո. (ԾմձԺ = 1663) և ոչ երկարեալ 'ի կեանա յետ երից ամաց և առ հանգեաւ 'ի Քս. և Թաղեցաւ (ԾմձԺ = 1666), եւ յետ խսահակայ Արքեպո. ի կալւա զԱթոռ Տեսչութեան վիճակիս Սեբաստիոյ Մելքիսեդէկ Գ. բարունապետ և Արէի եպօ.ն Սեբաստացի, այր հանճարեկ և խօհական։ Սա աշակերտ էր Յակոբայ Վրդպա. ի երգնկացւոյ՝ աշակերտի Տ. Ներսէս Կաթուղիկոսի Սոյոյ Սեբաստացւոյ, Յաւուրս ոորա հահատակեցաւ Դաւիթ մանուկն Սեբաստացի (ԾմձԻՋ = 1677 Պատմ.), Սա էր բաղնեպան և աշխատէր ընդ այլազգիս։ Յաւուրս միում ընկերքն իւր այլազգիք առեն ցնա, «Կեավուռ, ե՞կ առ զգրամն քո», և նա ասէ, «Նզովիալ եղիցի կեավուռն, Քրիստոնեայ և ծառայ Քրիստոսի եմ ես»։ Յայնժամ միտրանեալ նորա կալւան զնա և տարան առ բդէշին, և սոսացին թէ սա նզովս կարդայ օրինաց իւրը և գառնայ յօրէնս մեր, իսկ նորահարցեալ եգիտ զնա հաստատուն 'ի հաւատա Քրիստոսի և բազում ողոքանօք և սպաննալեօք ջանաց գարձուցանել զնա 'ի զաղիր կրօնս իւրեանց և ո՛չ կարաց, վասն որոյ ետ պնդել զոտս նորա 'ի կունեղ և բրածնե առնել զնա ընդ երկար, և ատա ջեռուցեալ աքցանօք կտրատել զմարժինն սրբոյն։ և նա հասանէր փոքր առ փոքր՝ 'ի գուռն մահու և ո՛չ դադարէր 'ի փառաբանելոյ զՔրիստոս։ Եւ իրըն տեսին հթէ յայսպիսի դառն տանջանաց 'և չարաչար կտանաց մատնեալ ո՛չ հաւատնի ուրացութեան, հրամայեաց բդէշին կախել զնա գլխիվայր և թողուլ անսուլաղ և յետ աւուրց ինչ կին բգէշչուին 'ի գիշերի եկ տեսանել թէ զի՞նչ առնէ սուրբն 'ի խաւար բանտին, և ետես վամբար մեծ յուսեղէն վառեալ առաջի նորա և գնաց ցեալ առ այրն ասէ. «զի՞նչ կայ քեզ և

ընդ արդարույն այնմիկ, ես զայապիսի հրաշս տեսից վասն այսր 'ի վաղին առաքեաց զնա առ միւս զուքսն, և նա հաս պնդել զատս սրբոյն 'ի կոճեղ և 'ի ներքոյ ոսրա հեղուլ ջուր զի ստանցի և հարկանել թաց պարտանօք մինչեւ կիսամեռ եղեւ և ապա առեալ տարան 'ի տեղի կատարմանն և անդ մերձեցեալ բգէջին բազում ողոքական բանիւք և ցուցմար ընչից և ոսկեասր երիվարաց ջանաց հաւանեցուցանել զնա և ո՛չ կորաց և ապա սկսաւ անացուցանել քարկոծումն և մահ սպառնալով և իրրե ետես թէ հաստատուն կայ 'ի հաւատս Թս.ի հրամայեաց և սկսաւ քարկոծել զնա և եկեալ ոմն անօրինաց մօտ առ սուրբն և ասաց՝ ուրացի՞ր ըզ-Քրիստոս, և նա գտաւնեաց զիս. ճշմարիտ ԱԾ, վասն որոյ հնդիցա ենար լոխտի զգլուխ սրբոյն, և արար զնա կիսամեռ, Եւ այլ ոմն եկեալ կալաւ զվարսից սրբոյն և ասաց. գտաւնի՞ս հաւատս մեր զի մի զրկեացիս յայր կենաց և նա կրկին զաւանեաց զիքրիստոս. և ապա քարկոծ արարին զնա և այնպէս քարի հաւատսով կատարեցաւ 'ի Թս. յաւուր տօնի սրբոց վարդանանց և յիշ երկուց աւուրց Տ. Մելքիսեդէկ Արքեպս. քաղաքիս, հրաման էառ 'ի դքսէն և ժողովեալ զկարատեալ մարմինն տարեալ թաղեցին 'ի Ս. Քառասունքն, սաղմասիւք և օրնութեամբ 'ի փառս Թս.ի Այ. մերոյւ Յետ նահատակութեան Սրբոյն Դաւթի, նահատակեցաւ Սեբաստացի Գասպար անուն ոմն որ և կուռան կոչիւր, Սա 27 ամառ յառաջ գիպուտածով փորձութեանց ուրացեալ եր զիաւատս Թս.ի և տաճկացեալ և յիշոյ զջացեալ լայր և ողբար. և կայր 'ի թագուն պահօք և աղօթիւք. և պաշտէր զիս. ԱԾ, իրրե լոււր զնահատակութիւն Դաւ-

թի, զնաց առ թահնանայ մի և խոստովանեալ զյանձանս իւր յայտնեաց զմիտս իւր և հաղորդեցաւ 'ի մարմոյ և յարենէ որդւոյն Այ. և փոխեալ զկերպարանս այլագգութեան զգեցաւ զնանդերձ Քրիստոնէի. և ելեալ չըջէր 'ի շուկայս, զոր տեսեալ Տաճկացն ասեն, Ընդէջը փոխեալ ես զկերպարանս քո. և նա ասաց՝ Քրիստոնեայ էի ես, և այժմ իսկ եմ. ես զիս. ԱԾ հաւատամ և զնա միայն պաշտեմ. յայնժամ կալեալ տարան առ գատաւորն քաղաքիս. և նա հարց և փորձ արարեալ և սաստիկ սպառնալիօք անացուցեալ՝ մինչ եգիտ զնա հաւատատուն 'ի հաւատս Թս.ի, հրամայեաց կախել զնա և տարեալ կախեցին և փութով իշացեալ հարցին թէ ուրանա՞ն զիս. և նա գրաշմէր զգէմս իւր նշանաւ սրբոյ խաչին սանլով թէ ԿՔրիստոնեայ եմ», ընդ որ բարկացեալ կախեցին և քարավիչժ արարին 'ի կախազանին, մինչեւ գլուխն ջախջախեալ ցընդեցաւ ուղիղն, և այնպէս կատարեցաւ երանելին Փասպար 'ի Թս. Յո. 'ի Տէր մեր և զաս ևս տարեալ թաղեցին մերձ Դաւթի նահատակին: Եւ յիշ երից ամաց նահատակութեան սրբոցս, Տեսուչ սրբոյ Մենաստանիս Սեբաստացի Մելքիսեդէկ Գ. Արքեպս. առեալ զԱր. Նշան՝ որպէս և աւանդի 'ի նախնեաց անտի մերոց՝ էր մասն կենաց փայտին Վարագոյ սրբոյ խաչին՝ ել նպաստ ժողովիլ 'ի սակա վարդան և աղատութեան պարտուց սրբոյ Վանիցս և վասն կարեաց պիտոյից սորին և գնացեալ ենաս յԱւանս, և անդ ժամանեալ վաղնան կենաց նորին հանգեալ 'ի Թս. և մեաց Ա. Նշանն անդ՝ յԱւոնս մինչեւ ցայսօք (ԲՃԻԹ = 1680: Տումար Մասանց և Պատմ.).

ՏիգրԱՆ Ս. ՔիրիծեԱն

Դարունակելի՝ 8)